

157
96 = 96 =

ՈՒՌՈՋԵՆՅԵԼԴ

Պ Ր Ո Ֆ

ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պ Ր Ա Վ VII



ԻՆՁԵԱՐԶԵՍԱԿՑԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՅՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

№ 37

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶԵՍՆ
ՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1. Ա. Լազովսկի. — «Հոտանքների պայքարը համաշխարհային արհաճարժման մեջ», (սպառոված)
2. » » «Արհմիությունները խնդիրներն ու դործերակերպը», (սպառոված)
3. Ե յ դ ու. — «Ակնարկներ Արևելքի բանվորական շարժման մասին», (սպառոված)
4. Արկ-Ան. — «Բանվ. շարժման պատմ. Անգլիայի, Ֆրանսիայում և Գերմանիայում», (միացել են սակավաթիվ որինակներ)
5. «Գործարկումների և տեղկումների ուղեցույց» 1
6. «Աշխատանքի որենադրեր» 15
7. Անտոշկին. — «Պրոֆեսիոնալ շարժումն Ռուսաստանում», (միացել են սակավաթիվ որինակներ)
8. Սեյդուշկին. — «Գործարկումների և տեղկումների անելիքները ներկա պայմաններում» . . . 25
9. Դուրսվիչ. — «Լենինը և արհմիությունները» . . . 50
10. Ֆարբիկանտ. — «Սոցիալական ապահովագրությունը», (սպառոված)
11. Տ ե տ ե ր ի ն. — «Ի՞նչ և արհմիության կանոնադրությունը» 25
12. Սպերանսկի. — «Ի՞նչ պետք է իմանա ամեն մի մարդ» . 20
13. Բիլսովսկի. — «Բանվորները և ծառայողների ապահովագրությունը հարձանդամության ղեկավարում», (սպառոված)
14. «Կանոնադրություն բանվորական գրադարանի» 15
15. Չ ե կ ի ն. — «Ակնարկներ բանվորական շարժման պատմությունից» 35
16. Բժ. Մելիֆյան. — «Սիֆիլիս» 20
17. Բժ. Կարապետյան. — «Մալարիա» 5
18. «Յերեք ինտերնացիոնալ», (սպառոված)
19. Գ ի ր ի ն ի ս. — «Ի՞նչ և արհեստակցական արտադրական միությունը» 33

142
881

1577/3

331.88 (47)


Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Ո. ՌՈԶԵՆՖԵԼԴ

ԻՆՉ Ե ԱՐՋԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՍՐՏԱԴՐԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՒՍԵԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ VII



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԻՍԿՐԱՆԻԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԻՍԿՐԱՆԻԿԱՆ ԿՈՄԻՏԵ № 37

ՅԵՐԵՎԱՆ

1926



881- ԿԳՂ

ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 441 ք.

Պատվ. 2297

Տիրութ 1500

**ԹՆՉ Ե ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ (ԱՐՏԱԳՐԱԿԱՆ) ՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝
ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

**ԻՆՉ Ե ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ
(ԱՐՏԱԳՐԱԿԱՆ) ՄԻՈՒ-
ԹՅՈՒՆԸ.**

«Պրոֆգրագիտության» նախորդ պրակներում մենք պարզեցինք, թե ինչպես ծնունդ առան արհեստակցական միությունները զանազան յերկրներում, ինչպես դարգացան և թե ինչպես փոխվեց նրանց կառուցվածքն ու խնդիրները՝ անտեսական-քաղաքական փոփոխությունների ազդեցության տակ:

Այդ փոփոխությունները շատ համառոտ, բայց չափազանց պարզ բնորոշել և ընկ. ինքինը (Ջուլհակների համառուտական համագումարում՝ 1920 թվին): «Յեւ ձեզ ցույց կաամ գիտակից բանփոքների արթնացման հետեյալ ետապները: Ձեզանից շատերը յերեկ հիշում են, կամ յսել են իրենց հայրերից, վոր բանվորները մի բանի տարի սրանից առաջ յերբ գործարան էլին ընկնում, առում էլին, «գործարանը կերակրում և ժողովրդին» և կարծում էլին, թե գործարանատերը իրենց բարեգործն է: Այդ ժամանակ բանվորները դեռ չէլին հասկանում, վոր կապիտալիստները շահագործում են իրենց: Այդպես էլին մտածում բոլոր կապիտալիստական յերկրների բանվորները:

Այս սկզբնական անտեղյակությունից ու անգիտակցությունից բանվորները աստիճանաբար սկսում են գուրս գալ և հասկանալ իրենց իսկական դրությունը: Ահա հենց այս ժամանակ սկիզբ են առնում գործադուլները: Բանվորները սկսում են գիտակիցել իրենց ուժն ու կարողությունը: Գործադուլները նրանց սովորեցրին, վոր առանձին—առանձին իրենք թույլ ու անողնական են, բայց յերբ միանում են, կազմում մի կուռ միություն, նրանք հպարտում և մեծ ուժ են դառնում: Գործադուլների զարգացման հետ միասին զարգանում և և արհեստակցական շարժումը: Հակառակորդին զիմադրելու կարողությունը խոշոր հատաձագիմա-

կան քայլ եր: Արհեստակցական շարժման առաջին շրջանում բան-
վորների ամբողջ ուշադրութիւնը ուղղած էր նրան, վոր կար-
ճացեն բանվորակա որը, ավելացնեն աշխատավարձը և այլն: Բանվորների մատոճոգութիւնը այդ ձգտումներից զենը չեր գնում: Բայց ահա, նոր ժամանակներ յեկան: Յոչոր գործարանատերերը
աշխարհն իրենց մեջ բաժանելու նպատակով իրենց իմպերիալիս-
տական ձգտումներով միացան բանկիրներին հետ: Այս վերջին պա-
տերազմը, վորի ընթացքում տասը միլլիոն մարդ սպանվեց և 30
միլլիոն հաշմանդամ գարձան, տյնուհետև Բրեստի ու Վերսալի
հաշտութեան պայմանագրերն էլ վերջնականապէս պարզեցին
բանվորների գիտակցութեանը և նրանք հասկացան, վոր իրենք
խաբված են յեղել, վոր պետերազմը մղել են կապիտալիստները
հենց իրենց ոգտին: Իսկ հենց վոր այդ բանը պարզվեց, տեղի ունե-
ցավ բանվորական հեղափոխութեան և կատարվեց հոկտեմբերեան
հեղաշրջումը: Կյանքի նոր պայմաններում, յերբ բանվորներն են
իշխանութեան գլուխ անցել, բանվոր դասակարգը այլևս չի բա-
վականանում արհմիութեանների նախկին խնդիրներով»:

Նախորդ յերեսներում մենք արդեն պարզել ենք, վոր պրոլե-
տարիտի գիկտատուրայի պայմաններում արհմիութեանները
նոր խնդիրներ ունեն:

Նշանակում է—փոխում է յերկրի ժողովրդական անտեսու-
թեանը, փոխութիւն են բանվորների քաղաքական պայքարի
պայմանները, հետևապէս, փոխում է և ամեն մի բանվորի գի-
տակցութեան աստիճանը և վերջին հաշիւով փոխում են նաև լայն
մասսայական միավորումների՝ արհմիութեանների խնդիրները:

Սակայն ի՞նչ է արհեստակցական միութեանը: Արհեստակցա-
կան միութեանը՝

1. Վարձու աշխատանք կատարող բանվորների մշտական կազ-
մակերպութեանն է,

2. Վոր համախմբում է նրանց ըստ արհեստակցութեան կամ
արտադրութեան,

3. Նրանց տնտեսական շահերը պաշտպանելու հողի վրա,

4. Վորն այդ խնդիրը յենթարկում է բանվորների ընդհանուր
քաակարգային պայքարի խնդիրներին (այսինքն անհատ—բան-
վորին դարձնում է բանվոր դասակարգի գիտակից անդամը, վորը

պայքարում և կապիտալիստական կարգերը բռնութեամբ տապա-
լելու համար) ,

5. Յեկ այն եւ այն չափով եւ յենքարկվում ,ինչ չափով վոր հա-
մապատասխանում ե ժողովրդական տնտեսութեան դրութեանն ու
գարգացմանը , ինչպես և տվյալ յերկրի բանվոր դասակարգի քա-
ղաքական պայքարին :

Ի՞նչ և նշանակում այս ամենը : Սա նշանակում ե՝ ամեն մի
արհեստակցական միութեան աշխատանքների մեջ մենք յերկու
կողմ ենք տեսնում :

Մի կողմից արհեստակցական միութեանը պաշտպանում ե իր
անդամների շահերը , վորպես իրենց բանվորական ուժերը վաճա-
ռողների , պայքարում ե , վորպեսզի նրանք իրենց ուժը , իրենց աշ-
խատանքը վորքան կարելի յե ավելի թանկ ծախեն , ավելի լավ
պայմաններում աշխատեն : Այսինքն—արհմիութեանը հոգ ե տա-
նում բանվորական որվա կրճատման , աշխատավարձի բարձրաց-
ման , աշխատավարձի պաշտպանութեան և այլ խնդիրների մասին ,
բանվորի տնտեսական ու իրավական շահերի մասին :

Մյուս կողմից արհեստակցական միութեանը իր շարքերի մեջ
ե տանում բանվորական լայն խավերը և իր շարքերում անդադար
դատախրտում ե նրանց , ամեն մի բանվորին պարզ հասկացողու-
թեան և տալիս իր դասակարգային շահերի մասին , և այն մա-
սին , վոր նրա շահերը ներհակ են , հակառակ են բուրժուազիայի ու
կապիվածատերերի շահերին : Ամեն մի կապիտալիստին առանձին
մանր ու համեատ պահանջներ ներկայացնելու փոխարեն , արհմիու-
թեանը բանվորին սովորեցնում ե վճռական պայքար մղել ամբողջ
կապիտալիստական պետութեան դեմ և բռնի ուժով տապալել
կապիտալիստական հասարակարգը : Այսինքն—արհեստակցա-
կան միութեանը այնպես և դատախարկում բանվորին , վոր նա
փոխանակ իր առանձին անհատական շահերի մասին մտածելու ,
դառնա բանվոր դասակարգի գիտակից անդամը , պայքարի ամբողջ
դասակարգի շահերի համար , ուրեմն—տնտեսական պայքարի
խնդիրները յենթարկում ե պրոլետարիատի ընդհանուր դասա-
կարգային քաղաքական խնդիրներին :

— Բայց ներեցե՞ք ,—կասեն մեզ—արհմիութեանները աշխարհի
բնորոշումը ինչպե՞ս կարելի յե ընդունել Արեւմուտքի ու Ամերի-
կայի համաձայնողական , դեղին միութեանները նկատմամբ : Չե՞
վոր , որինակ , անգլիական միութեանները առայժմ բոլորովին

միտք չունեն տապալելու բուրժուազիայի իշխանությունը, իսկ ամերիկական միությունները նույնիսկ բացարձակ կերպով հայտարարում են, վոր նրանք կապիտալիստական հասարակության ամբողջական կողմնակից են:

Յեւ մհա, հենց այդ բանը հասկանալու համար հարկավոր և ալելի լավ մտածել արհմիությանը ալամ մեր բնորոշման Եւրկետի մասին: Որինակի համար, վերցնենք ամերիկական գեղին միությունները: Այդ միությունները համախմբում են աշխատաբանվորներ, գործնք մինչև այժմ բոլորովին չեն հատկացել իրենց դասակարգային շահերը: Ճիշտ և, նրանք արվեն գիտակցում են, վոր հարկավոր և միանալ, հարկավոր և պայքար մղել դատապարտ կապիտալիստները գեմ աշխատավարձը բարձրացնելու և բանվորական ուրը կրճատելու համար: Նրանք իրենց շարքերում բնդգրկել են միլիոնավոր բանվորներ և մասամբ կարողացել են նրանց տնտեսական գրությունը լավացնել, բայց նրանք դեռ բոլորովին պարզ չեն հատկացել, թե ինչ բանի համար պիտի պայքարի Ամերիկայի բանվոր դասակարգն ամբողջապես, վորպեսզի բոլորովին ազատվի վարձու աշխատանքի ստրկութունից: Ամերիկայի գեղին միությունները՝ պայքարելով առանձին կապիտալիստները գեմ, միաժամանակ շարունակում են պաշտպանել Ամերիկայի բուրժուական կառավարությունը, ալսինքն—պաշտպանում են գործարանատերերը կամ ուրիշ խոտբով, կապիտալիստական դասակարգի իշխանությունը: Յլապիտով, Ամերիկայի գեղին միությունների շուրջը համախմբում բանվորների դասակարգային գիտակցությունը չափազանց ցածր և: Հենց դրա համար էլ, այդ միությունները իրենց տնտեսական պայքարը չեն յենթարկում պրպիտարիատի ընդհանուր դասակարգային պայքարի խնդիրներին, ուրիշ կերպ ստամ, այդ յենթարկման չափը գրոյի յե հալատար*):

*) Արիմիությունների մասին գուտ բուրժուական հասկացողություն տալիս են Ս. և Հ. Վերբերը, վորոնք անգլիական տրեդյունիոնների խոշորագույն գեկավարներից են: 1894 թվին նրանք գրում են. «մեր հասկացողությամբ արեեստակցական միությունը վարձու աշխատանք տանող բանվորի յերկար ժամանակ գործող միալորումն է, վոր կազմակերպում է բանվորները՝ վարձման դրությունը պահպանելու կամ բարելավել»:

Բայց, վերջապես ինչի՞ց և կախված արհմիությունների մեջ մտնող բանվորական մասսաների դասակարգային գիտությունն աստիճանը, նրանց հեղափոխությունը կամ համաձայնողականությունը: Մենք այդ մասին խոսել ենք այս գրքի առաջի գլխում՝ «արհեստակցական շարժման զարգացման սրենքները» մասում (տես պրակ 2-րդ):

1. Ամենից առաջ այդ աստիճանը կախված է տվյալ յերկրի ժողովրդական տնտեսության զրույթունից, զարգացումից և փոփոխություններից:

2. Յերկրորդ հերթին, բացի ժողովրդական տնտեսության վիճակից, նա կախված է նաև բանվորների ընդհանուր դասակարգային քաղաքական պայքարի ամբողջ ընթացքից (լարվածության, հաջողության կամ անհաջողության աստիճանից):

Նախորդ պրակներում մենք ցույց տվինք, թե ինչպես Ամերիկայի կուռ միավորված կապիտալիզմը մի կողմից իր բարձր տարիքներով գրավում էր վորակյալ բանվորներին, բանվորական արխ-

յու նպատակներով»: Նշանակում է—արհմիություններին ամբողջ ինդիլրն այն է, վոր կամ բույլ չտան կապիտալիստներին իջեցնել աշխատավարձը կամ աշխատեն բարձրացնել այն: Բայց հենց վոր գործը հասնի ամբողջ կապիտալիստական դասակարգի դեմ պայքարելուն, նրանց իշխանությունը տապալելուն և գործարաններն ու գավոդները աշխատավորներին հանձնելուն, բեֆորմիստական արհմիություններն անմիջապես սարսափած հետ են քաշվում—կապիտալիզմի հիմքերը խախտելու փորձ անել նրանք չեն համաձայնվում:

Վերքերի հայացքներին շատ նման են և Նեստրիպկեյի հայացքները, վորը գերմանական նշանավոր պրոֆեսիոնալիստ-համաձայնողական է: «Արհեստակցական միություն ասելով—ասում է նա—մենք հասկանում ենք միեկույն արհեստի կամ միեկույն արտադրության բանվորների տեական միավորումը, իրենց շահերը պաշտպանելու համար և մասնավոր աշխատանքի առաջարկի վրա ազդելով բանվորական պայմանագրի և նրա աշխատանքի պայմանների վրա ազդելու նպատակով»: Ուրեմն՝ այստեղ ևս, իբր թե արհեստակց. աշխատանքի ամբողջ ելույթյունն այն է, վոր միությունները պետք է կազմակերպված ձևով կապիտալիստներին առաջարկեն իրենց բանվորական ուժը

տողրատիային, և նպաստում էր նրանց համաքարային միություն-
ներին մեջ համախմբվելու, իսկ մյուս կողմից—ամենադաժան բուր-
ժուական գիկտատուրայի միջոցով խեղդում էր բանվորական
չարժման ամբողջ հեղափոխությունը, ստեղծում էր միութենա-
կան դեղին բյուրոկրատիա, և սոցիալիստ-համաձայնողականներ,
և ամերիկական արհմիությունները յենթարկում էր վերջիններիս
ազդեցությանը: Ռուսաստանում ընդհակառակը, գյուղացիական
յերերի դատակարգային սուր հակասությունները փոթորկալից
թափով զարգացող կապիտալիզմի հետ, և ցարիզմի չլաված ծանր
յուժը նպաստում էլին, վոր պարզվի ռուսական պրոլետարիատի
դատակարգային ինքնազիտակցությունը, վորի առաջավոր ավան-
դարդը համախմբվել էր քաղաքական հեղափոխական բալչևիկյան
կուսակցության մեջ: Իսկ իմպերիալիստական պատերազմից հե-
տո, Ռուսաստանի բանվորների այդ դատակարգային ինքնազի-
տակցությունն այնքան պարզ ու ցայտուն դարձավ, վոր նրանք
բալչևիկյան կոմունիստական կուսակցության գեկավարությամբ
Հոկտեմբերյան հեղաշրջումը կատարեցին: Յեվ, ինչպես արդեն
գիտենք, ռուսական արհմիությունները Ռուսաստանի բուրժուա-
կան իշխանությունը տապալելու և պրոլետարիատի գիկտատուրա
հաստատելու գործում աննչան ուժ չհանդիսացան, իսկ այժմ էլ

և պիտի համաձայնության գան նրանց հետ իրենց անդամների
աշխատանքի պայմանները լավացնելու համար:

Ի հարկե, բուրժուազիան շատ գոհ է վերքերի և նեստրիպ-
կեյի նման արեմիլությունների «դեկավարներից», վորոնք շատ
մեծ խնամքով լուում են ամենաարմատական ու միակ ձգտելի
նպատակի ու միջոցի մասին, վորով կարելի չե բարելավել բան-
վոր դատակարգի դրությունը—այսինքն՝ կապիտալիզմը տա-
պալելու մասին: Ճիշտ է, վերքերը, որինակ, 1920 թվին վո-
րոշ չափով փոխում են իրենց հայացքները: Իրենց աշխատու-
թյան նոր հրատարակության մեջ նրանք գրում են, վոր միու-
թյունների նպատակն է պաշտպանել և բարելավել վոշ քե վար-
ձելու պայմանները, այլ բանվորների կյանքի պայմանները,
բայց, իհարկե, դժվար է յենթադրել, վոր այդպիսի արմատա-
ցած համաձայնողականները, ինչպես որինակ վերքերը, կարո-
ղանան այստեղ լրջորեն դնել բանվորների լայն դատակարգա-
յին պայքարի խնդիրը:

Հետին ուժ չեն նույնպես և բանվորական պետութեան կառուցման խնդրում : Այսինքն—նրանք տնտեսական պայքարի խնդիրներն ամբողջովին յենթարկեցին պրոլետարիատի ընդհանուր դասակարգային պայքարի խնդիրներին :

Մեզ մոտ, այդ յենթարկման արտիճանը ամենաբաժր չափին հասաւ :

Նշանակում է միությունների տնտեսական պայքարը ընդհանուր դասակարգային պայքարի խնդիրներին յենթարկելու աստիճանը կարող է տատանվել գերոյից (գերշնչունկերովյան, ամերիկյան և այլ միություններ) մինչև ամենաբաժր չափը (ԽՍՀՄ-ի արհմիությունները) :

Ղերեր բերած արհմիությունների մեր ընդդէմը ունի և այն արժեքավոր նշանակութիւնը, վոր անշեղ հետեւելով պատմական մատուրիայից, նա մեզ հնարավորութիւն է տալիս ընդգրկելու և բացատրելու վոչ թե այս կամ այն յերկրի արհարմուքը և այն ել մի կամ մի տասնյակ տարվա ընթացքում, այլ հնարավորութիւն է տալիս ուսումնասիրելու ամբողջ արհշարմուքը լիովին, իր ամբողջ ելուքայւմ և փոփոխութիւններով և շատ ու շատ տասնյակ տարիների ընթացքում :

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒ-

ԹՅՈՒՆԸ

Մենք տվեցինք և արհեստակցական միութեան ժառանգական դասակարգային ընդդէմը : Առաջին հայացքից նա կարծես շատ նման է բանվոր դասակարգի կուսակցութեան հակառակութեանը : Յեւ իսկապես, կուսակցութիւնը, ինչպես և միութիւնը, դասակարգային կազմակերպութիւն է, նա նույնպես կազմված է բանվորներից, նա նույնպես կոչ է անում աշխատավորութեանը պայքարել կոմունիզմի համար և իր ամբողջ աշխատանքը յենթարկում է պրոլետարիատի ընդհանուր դասակարգային պայքարի խնդիրներին : Մական յեթե քնենք ինչպես պետք է, շատ խաչոր տարբերութիւն կը գտնենք :

Իր դասակարգային պայքարի ժամանակ բանվոր դասակարգը միանգամից չի դուրս գալիս, վորպես մի ամբողջութիւն : Բանվորական յայն մասունքը խեղդված են կապիտալիզմի լծի տակ, բթացած են արհեստակցական ու այլ և այլ խտրութիւններով, այնքան, վոր միանգամից չեն կարող հասկանալ իրենց շահերի միատեսակութիւնը—միատեսակութիւնը : Բացի այդ, բանվոր դասակարգը միատարր չէ : Կա այն—

պիտի բաժնի վորակի բանվոր, վոր լավ կրթություն և ստացել, լավ վարձատրվում և նա դողում է իր պաշտոնի համար, վախենում է թե վորեւե պատճառով չզրկվի իր տեղից: Յերբեմն էլ նա իր դրությունից դժգոհելու առանձին պատճառներ էլ չունի: Յեւ ահա, յեթե գործարանի մյուս բանվորները, վորոնք ավելի վատ պայմաններում են գտնվում, կապիտալիստի դեմ դաժան պայքարի մեջ մտնեն, կամ մասնակցեն քաղաքական գործադուլին, այդ կրթված, չափ—թե քիչ կուշտ բանվորը կարող է դասայիք դառնալ, ասել՝ «յես գործ չունեմ ձեզ հետ» և կարող է ծածկվել իր փոքր—կրթված բանվորների նեղ համքարային առանձնահատուկ շահերի տակ: Կամ վերջներե այն ուսու բանվորներին, վորոնք անցյալ դարի վերջերին գլուզերից պախ ելին գործարան, բայց գլուզի հետ էլ իրենց կապը չեղին կարում: Կարո՞ղ են այդպիսի բանվորները, վորոնք դեռ մի կարո հող ունեն, վոր մշակում է իրենց ընտանիքը, իրենք էլ ամուր գնում են առն՝ իրր թե «այցեկության», բայց ավելի ճիշտ՝ աշխատելու (հնձելու, կալսելու և այլն), այդպիսի բանվորները կարո՞ղ են կապիտալիստի դեմ մղված պայքարում անհրաժեշտ տոկոսնություն ու հաստատակամությունը ցուցարեւել: Ի հարկե, վոր: Տիրոջ հետ ծանր քնդհարումների բուռն, գործադուլային կամ քաղաքական պայքարի մեջ այդպիսի բանվորը, ի հարկե, ավելի քիչ հաստատակամ կլինի, ավելի զիջող կլինի, կուլակների մտրակների ու ցարական բանդերի սարսափից կթողնի և՛ գործաբանը, և՛ պայքարը ու կիսիւնչի հետ—զեպի իրենց գլուզը: Յեւ ահա, բանվոր դասակարգի հենց այն մասը, վորն ավելի գիտակից ու առաջադեմ է, ապագան ավելի պարզ ու ավելի լավ է տեսնում քան մյուսները, վորն ամենից լավ է հասկանում, թե բանվորն ինչպես պիտի պայքարի բուրժուազիայի դեմ և ըմբռնում է բուրժուազիային հաղթելու ամենահեշտ ճանապարհը, ահա հենց այդ մասը կազմում է բանվոր դասակարգի կուսակցությունը, նրա ուղեցույցը, նրա զերպույն չտարը՝ դասակարգային պայքարի ճակատներում:

Ի՞նչ է գրել սրա մասին պրոլետարիատի հանձարեղ առաջնորդը—ընկեր Լենինը: Նա ասել է, վոր «բանվորների քաղաքական կուսակցությունը բանվոր դասակարգն է ներկայացնում մոլ թե նրա և ձեռնարկատերերի միայն ավյալ խմբակի հարաբերությունների մեջ, այլ նրա և ժամանակակից հասարակության բոլոր դասակարգերի հարաբերությունների մեջ, նրա և պետության»

փորպէս կազմակերպված քաղաքական ուժի—Հարաբերությունների մեջ» : («Ի՞նչ անել» 1902 թ.) :

Ի՞նչպէս հասկանալ այս : Վերջիններ, որինակ 1905 թվի հունվարի 9-ի դեպքերը : Պետիրլովսկի գործարանի վարչության ճշնչումներինց հուզված լայն մասսան սկսում է այնպիսի : Սակայն, զեռ անգիտակից այդ մասսան վոստիկանության արբանյակ Գապոն քահանայի ազդեցության տակ, վարդում է գնալ և գանգատվել հայր—թաղավորին : Իսկ վերջինս, իր համատարիմ հպատակներին «բարեհաճեց» պատասխանել մտրակով ու գնդակներով : Իսկ ի՞նչ էլին ասում այդ ժամանակ սոցիալ-դեմոկրատները, բանվոր դասակարգի քաղաքական կուսակցության անդամները : Նրանք ասում էլին. «Բանվորներ, ում մոտ էք գնում գանգատվելու : Կապիտալիստներից և տերերից գանգատ էք գնում Ռուսաստանի կապիտալիստների զլխավորին, բուրժուական կառավարության զլխավորին, վորի միջոցով կապիտալիստները աշխատում են խեղդել պայքարի յերած ամբողջ դասակարգը : Առանձին ձեռնարկատերերի զեմ պայքարելը բավական չէ, հարկավոր է պայքարել ամբողջ բուրժուակայի զեմ, հարկավոր է հարվածել նրան զինված ապստամբությամբ, հարկավոր է տապալել միապետությունը, հարկավոր է խորտակել բուրժուական պետությունը» :

Ուրեմն—կուսակցությունը վերջին ու վնասական կոնվենցի համար մի եզր ուժի մեջ է համախմբում աշխատավորական ցրված խմբերը : «Սոցիալ-դեմոկրատիան,—գրում է ընկեր Լենինը—դեկավարում է բանվոր դասակարգի պայքարը վոչ միայն բանվորական ուժերի վաճառման ձեռնառ պայմանների համար, այլ և փոխհանգրու համար այն հասարակակարգը, վորն ստիպում է շունեորին ծախվել» : («Ի՞նչ անել» 1902 թ.) :

Վերեր մենք տապինք, վոր արհեստակցական միությունը վարժու աշխատավորների լայն կազմակերպություն պիտի լինի, վոր իր շուրջն է համախմբում արհեստակցական կամ արտադրական մշանացույցով : Իսկ կուսակցությունը : Ի՞նչ է ասում այս մասին ընկ. Լենինը. «Բանվորների կազմակերպությունը պիտի լինի հնար յեղածին չափ լայն կազմակերպություն, յերկրորդ—նա պիտի վորքան կարելի յէ քիչ կոնսպիրատիվ (զազանի) լինի (հասկանալի յէ, վոր այստեղ է ստորեւ, յես խոսում եմ, նկատի ունենալով միապետական Ռուսաստանը) : Ընդհակառակը, հեղափոխականների կազմակերպությունը պիտի ընդգրկի, ամենից առաջ

և զլիափորապես այնպիսի մարդկանց, վարոնց արհեստը հեղափոխական գործունեությունն է (հենց դրա համար էլ յես խոսում եմ հեղափոխականների կազմակերպության մասին՝ նկատի ունենալով սոցիալ-դեմոկրատներին)։ Այդպիսի կազմակերպության անդամների այդ ընդհանուր նշանի առաջ պիտի ֆնջվեն բանվորների ու ինտելիգենտների բոլոր մյուս տարբերությունները, չխոսելով արդեն նրանց առանձին զբաղմունքների տարբերությունների մասին։ Այդ կազմակերպությունն անհրաժեշտաբար պիտի լինի վոչ շատ մեծ և վորքան կարելի չե, ավելի կոնսպիրատիվ»։ («Ի՞նչ անել» 1902 թ.)։

Ամեն մի գործի համար, մարտական ավանգարդն այնքան էլ մեծ չի լինում—(ինչպես վոր կուսակցությունն է բանվոր դասակարգի համար)։ Նույնիսկ Խորհրդային Ռուսաստանում, պրոլետարիատի զեկատատության պետության մեջ, արհեստակցական միություններն ընդգրկում են 6 միլիոնից ավելի անդամներ, իսկ կուսակցությունը դրա մեկ տասերորդից մի քիչ ավելի—600—700 հազար հոգի։ Որինակ՝ կա բանվոր, վոր ասում է. «Յես ինքս համոզմունքներով կոմունիստ եմ, կզբվեյի կուսակցության մեջ, բայց բանն այն է, վոր ձեռքս չի գնում սրբի պատկերներն իմ սենյակից պոկել, հավատում եմ աստծուն, իսկ կոմունիստները դրան հակառակ են»։ Ուրիշն ասում է. «Յես էլ սիրում եմ դինի—սորադ խմել, թարկը տալ չեմ կարող, իսկ կոմունիստին չի կարելի խմել, հենց դրա համար էլ չեմ կարող կուսակցության մեջ մտնել»։ Իսկ յերրորդը ուղղակի վախենում է կուսակցական պարտականություններից, դիպչալլկնայից, գորահավաքից, վորովհետև ընդհանրապես չի մտածում թե բանվորն ինչու պիտի կուսակցության մեջ լինի։ Յեմ վորքան բանվորական մաստան ավելի չե դասակարգային գիտակցության գալիս, այնքան ավելի շատ է մոտենում կուսակցությանը, այնքան ավելի շատերն են մտնում կուսակցության շարքերը։ Այսպես որինակ՝ ընկ. Լենինի մահից հետո, 1924 թվի սկզբներին բանվորները մաստալորեն մտնում եյին կոմկուսի շարքերը։ «Լենինյան կոչին» 250,000 մարդ ընդունվեց։ Սա ինչ է նշանակում։ Նշանակում է, վոր Խորհրդային իշխանությունն և արհմիությունների աշխատանքների ընթացքում Ռուսաստանում բանվոր դասակարգի նոր առաջավոր շերտերը հասել են բարձր գիտակցության, դարձել են կոմունիստներ, վորոնք ընդունում են և կուսակցության ծրագրերը, և նրա պահանջները,

սլարդ հասկանում են աշխատավորութեան դասակարգային շահերը և պատրաստ են ամեն բոլոր կողմի դուրս դալու այդ շահերի պաշտպանութեան համար: Յե՛վ, ի հարկե՛ն, կուսակցութեանը չի կարող բաժանվել ըստ արհեստի կամ ըստ արտադրութեան: Չե՞ վոր ամեն մի արհեստ կամ արտադրութեան նկատի ունեն իրենց ընդհրկած բանվորների տեղական առանձնահատուկ շահերի պաշտպանութեանը: Իսկ կուսակցութեանը, ընկեր Լենինի խոսքերով—հենց նրանով էլ տարբերվում է, վոր «նա տեսնում է բանվոր դասակարգի պատմական ուղին ամբողջապես, աշխատում է այդ ճանապարհի բոլոր պատվարներում պաշտպանել վու՛չ թե առանձին խմբակների, առանձին պրոֆեսիաների շահերը, այլ ամբողջ դասակարգի շահերը»: Կուսակցութեանը միայն առաջապահ գունդ չէ, նա գլխավոր շտաբն է, նա բանվոր դասակարգի ուղեղն է և հասկանալի չէ, վոր նրա հաստատուն ղեկավարութեամբ և միմիայն նրա ղեկավարությամբ արհեստակցական միութեանները, աշխատավորութեան այդ հետիտան բանակը կարող է իր ամբողջ մասնաշաղկ հաջողությամբ առաջ դնալ, ժամանակին հարձակում գործել ու նահանջել, վճռական կռիւնների մեջ մտնել կապիտալիստական դասակարգի դեմ և այդ կռիւններում վճռական հաղթանակներ տանել:

**«ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ» ԶԳՏՈՒՄԸ
ՄԸ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ՅԵՎ ՆՐԱ ՌԵԱԿՑԻՈՆ Ե՝
ՅՈՒԹՅՈՒՆԸ:**

Միութեանների կուսակցութեանը կարվելը, անշուշտ, նշանակում է այլասերում, հեղափոխական ընդհանուր դասակարգային շահերից, գործնականում բուրժուազիայի կողմըն անցնել:

Բանվոր դասակարգի կուսակցութեանը սլաքարում է բանվորներին կապիտալիզմի լծից լիովին ազատելու համար, այսինքն—նա ղեկավարում է բանվոր դասակարգի և տնտեսական և քաղաքական սլաքարը: Նա իր քարոզիչներն է ուղարկում գործարաններն ու դավղները և՛ գործադուլ կազմակերպելու աշխատավարձը բարձրացնելու համար, և՛ զինված ապստամբութեան նախապատրաստելու բուրժուազիային տապալելու համար:

Հեղափոխական արհմիութեանները նույնպես, կուսակցութեան ղեկավարութեամբ վու՛չ միայն տնտեսական, այլ և քաղաքական սլաքար են մղում: Չի կարելի ասել, թե միութեանները

պետք է զբաղվեն տնտեսական պայքարով, իսկ կուսակցութիւնը—միայն քաղաքական և աշխարհային անջատելի միութիւնները կուսակցութիւնից։ Դա իր ելուցմամբ հակասում է բանվոր դասակարգի շահերին և ձեռնառն յի միմիայն նրա թշնամիներին։ Այնինչ, ուստական մենչեիկմբ իր արեմտայեկրոպական յեղբայրակիցներին պէս շարունակ աշխատել և Ռուսաստանի արհմիութիւնները համաձայնողական ճահիճի մէջ քաշել, կոչ է արել նրանց լինել «չեզոք», «անկախ», հրաժարվել քաղաքական պայքարից։ Դեռ 1901 թվին, աշուկս կոչված, «Եկոնոմիստները» ջանք ելին թափում բանվոր դասակարգին հետ կանգնեցնել ամեն տեսակ քաղաքականութիւնից, և զբա փոխարեն զբաղվել անշան պայքարով ինչ վոր գրոշներին համար—աշխատավարձը բարձրացնելու, բանվորական սրը կրճատելու համար։

Այդ խնդրում նրանց անխնա կերպով մերկացրին «Բակրայի» կողմնակիցները՝ ընկ. Լենինի ղեկավարութիւնը։ 1906 թվին Պետկհոմի միացյալ համագումարում մենչեիկները տապալեցին բաշխիկներին տաճարկութիւնը—թե անհրաժեշտ է, վոր կուսակցութիւնը ղեկավարի արհմիութիւնները, և անց կացրին իրենց բանածը—միութիւնների «չեզոքութիւն», «անկախութիւն» մասին, աշխինքն մի բանածն, վորը շատ ձեռնառն յի բուրժուազիային։ «Բուրժուազիայի դասակարգային շահերը», գրում էր այդ ժամանակ ընկ. Լենինը^{*)} «անխուսափելի կերպով ձգտում են սահմանափակելու միութիւնները մանր մուրք գործունէութիւնը գոյութիւն ունեցող հասարակարգի պայմաններում, կտրել նրանց բոլոր կապերը սոցիալիզմի հետ. չեզոքութիւն թեորիան այդ բուրժուական ձգտումների արտահայտութիւնն է»։

Վերջենք ավելի մտաիկ սրինակ. 1917 թվին մենչեիկները ամեն կերպ պաշտպանում էին ժամանակավոր կառավարութիւնը և նույնիսկ արհմիութիւններին 3-րդ կոնֆերենցիայում մի բանածն անց կացրին այն մասին, թե անհրաժեշտ է այդ պաշտպանութիւնը։ Ինչպէս հայտնի յի, ժամանակավոր կառավարութիւնը բուրժուական կառավարութիւն էր, իսկ համաձայնողականները խորհուրդ ելին տալիս պաշտպանել այդ կառավարութիւնը։ Բայց ահա—Հոկտեմբերը ջախջախեց բուրժուական պե-

*) «Պրոլետարիզ» № 22, 19 փետրվ. (4 մարտի) 1908 թ.

առությունը, Ռուսաստանում հաստատվեց Խորհրդային իշխանություն, հեղափոխական արհմիությունները սերտ կապ ու դորժակցություն ստեղծեցին Խորհրդային իշխանության հետ, հետեւիսպես եւ—նրա ղեկավար Կոմունիստական Կուսակցության հետ։ Ահա այդ ժամանակ զավաճան մենչեիկները սկսում են իրենց վտնոցները։ «Ինչպե՞ս—հայտարարում են նրանք—արհմիություններն իբրեւ բանվորական մասսայական կազմակերպություններ, միշտ պայքարել են պետության դեմ, վոր մի ճնշման դործիք ե տիրապետող պատկարզի ձեռքին, այժմ այդ նույն արհմիությունները պետության լուծը իրենց ուսերին պիտի վերցնեն։ Արհմիությունները պիտի քաղաքականությամբ զբաղվեն, կուսակցության ղեկավարությամբ պիտի յենթարկվեն ե այլն...»։

Ի՞նչ էլին ուզում մենչեիկները։ Նրանք ուզում էլին, վոր արհմիությունները, այսինքն կազմակերպված պրոլետարիատի բայն մասսաները վոչ միայն մի կողմը կանգնեն ու դիտեն, թե ինչպես «դուրս կպրծնի» այդ Խորհրդային իշխանությունը, այլ վոր նույնիսկ պայքար մղեն այդ իշխանության դեմ։ Սոցիալիստական հեղափոխության ամենայնոուն չըջանում, պրոլետարիատի ու բուրժուազիայի ամենամոտական կռիւ չըջանում, յերբ ամեն վոր, վոր չեւ գտնվում բարբիկաղների մի կողմը, զբանով արդեն ապացուցում եւ, վոր մյուս կողմումն ե։ «Անկախականները»—բուրժուազիայի հալատարիւմ պոչը դարձած 1917—18 թվին Ռուսաստանի պայքարող պրոլետարիատին առաջարկում էլին պարան դործել ե վիզը կախաղանի ողակի մեջ գնել։ Յեւ յեթե Ռուսաստանի Կարմիր արհմիությունները թեկուզ մի վարկյան այդ թակարդի մեջ ընկնէլին, Ի՞նչպիտի անմոռնայի նվեր պիտի լինէր այդ ցարական վոհմակի համար, վորն այդ ժամանակ առամենբը սրելով ամեն կողմից շարժվում եր Խորհրդային Ռուսաստանի վրա։

Ռուսաստանի արհմիությունները չյերբացին։ Ի պատասխան «անկախության» քարոզի, նրանք դուրս բշեցին մենչեիկներին արեշարժման բոլոր պատասխանատու դիրքերից ե ավելի խիտ համախմբվեցին կոմունիստական կուսակցության—լենինիզմի պրոչակի տակ։ Ի հարկե, չպիտի կարծել, վոր բոլոր արհմիություններն ել յեթե պրոլետարիատի քաղաքական կուսակցության ղեկավարության տակ են գտնվում, զբանով արդեն նրանք հեղա-

փոխական ուղի յեն բռնել: Վո՛չ, դա բաժնական չէ: Հարկավոր ե-
 վոր հենց այդ փաղափակն կուսակցությունն ինքը լինի բայժե-
 վիկյան, հեղափոխական: Հենց թեկուզ վերցնենք Գերմանիայի
 դեղին արհմիությունները: Ինչպես վերեն ասացինք, նրանք
 իրենց ծրագրով անկախ են, բայց իրականում ամենատեսիլ կապ
 են պահպանում գերմանական բեֆորմիստական, համաձայնողա-
 կան սոց.—գերմանական կուսակցության հետ և թե այդ կու-
 սակցության և թե իրենց պրոֆրյուրսիրատ գլխավորներին ղեկա-
 վարությամբ, ամեն քայլափոխում գաղափարում են բանվոր դա-
 սակարգին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՄԵՆՔ պարզեցինք, թե ինչ վե-
 ԱՐ ՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ րաբերմունք են ունենալու արե-
 միությունները դեպի կուսակցու-
 քյունը: Իսկ կուսակցությանն ինչպես պիտի վերաբերվի դե-
 պի արհմիությունները:

Կուսակցությունը շատ լուրջ և համառ աշխատանք պիտի
 կատարի արհմիություններին մեջ, վորպեսպի վերջիններս վո՛չ թե
 «անկախ» մնան, այլ դառնան կուսակցական: Ինչ մտքով կու-
 սակցական. այն մտքով կուսակցական, վոր պրոլետարիատի կու-
 սակցությունը իր աշխատառնով փաստաբեմ ավելի ու ավելի իր
 ձեռքը գցի միությունների ղեկավարությունը: Նա իր կողմը և
 իր շարքերն և գրավում առանձնապես ղիտակից բանվորներին
 միություններին մեջ նրանցից կազմում և կոմունիստական ֆրակ-
 ցիաներ:

Միութենական լայն մասսան լիովին մատահում և այդ ֆրակ-
 ցիաներին ու դնում նրանց հետևից: Յե՛վ ահա, կուսակցությունն
 ել, հենց այդ ֆրակցիաների միջոցով և ուղղություն տալիս միու-
 թյան աշխատանքներին:

Իսկ ճի՛շտ կլինե՞ր արդյոք, յեթե միությունները սկսեն ձե-
 վականորեն կուսակցական դառնալ, այսինքն—յեթե արհմիու-
 թյան ամեն մի անդամից սկսելին կուսակցական տոմս պահան-
 ջել: Այդպիսի պահանջ կարելի չէ անել միայն բանվոր դասա-
 կարդի ամանդարդից, բայց զբանով կիրքունցենք բանվորական
 լայն մասսաներին, վորոնք թեև դասակարգային առողջ ղիտակ-
 ցությամբ կապիտալիզմի դեմ մղվող պայքարի մեջ են նետվել,
 սակայն դեռ բոլորը չեն խորացել այդ պայքարի մեջ, դեռ վերջ-

նականապես չեն ազատագրվել կապիտալիստական կարգերի մնացորդներից : Ահա թե ինչու Ռեյկ Կենսկոմի բանաձևը «արժիությունների խնդիրները ՆեՊ-ի պայմաններում» հարցի մասին ընդգծում է , վոր «արժիության անդամներից միշտ կերպ չի կարելի վորոշ քաղաքական հայացքներ պահանջել : Այդ հարցում , ինչպես կրոնի նկատմամբ , նրանք—արժիությունները պիտի լինեն անկուսակցական :

Պրոլետարական պետության մեջ արժիության անդամից պետք է պահանջել միայն , վոր նա հասկանա , թե անհրաժեշտ է ընկերական դիսցիպլինա և անհրաժեշտ է համախմբել բանվորական ուժերը , աշխատավորության շահերը պաշտպանելու և նրանց իշխանությանը—այսինքն խորհրդային իշխանությանն ոգնելու համար» :

Կուսակցությունն ավանդարդն է , բայց ավանդարդն անգործ և առանց բանվոր դասակարգի հիմնական կադրերի , վորոնց նա տանում է իր հետեից—ասել է ընկ . Լենինը : Աշխատել մատանքի մեջ , ահա այս է այն հիմնական պատգամը , վոր ստացավ լենինյան կուսակցությունն իր հանձնարեղ առաջնորդից : Դեղին , ռևոլյուցիոն միություններում ամեն մի հեղափոխական , ամեն մի կոմունիստ բացի դեղին մենչեիկյան դիսավորների դեմ պայքարելուց , ամենահամառ , ամենազգույշ և մտածված ձևով պիտի աշխատի դրավել ամենահետամնաց մասսաներին : Հիմարություն և քրթմնջալ , դժգոհել , ջղախնայալ ու վրվրել , թե մասսան հետ է մնացել : Բանվոր դասակարգը յերկնքից չի ընկել պատրաստ դրությամբ :

«Կապիտալիզմը—ասում է ընկ . Լենինը—անխուսափելի կերպով ժառանգություն է թողնում սոցիալիզմին մի կողմից բանվորների մեջ դարերով առաջացած արհեստակցական տարբերությունները , իսկ մյուս կողմից՝ արժիությունները , վորոնք շատ դանդաղորեն , յերկար տարիների ընթացքում կարող են զարգանալ և զարգանալու չեն՝ զառնալով ավելի լայն , ավելի քիչ չափով համքարային , արտադրական միություններ (վորոնք ընդգրկելու չեն ամբողջ արտադրություններ և միշտ էլ միայն համքարություններ , արհեստներ , պրոֆեսիաներ) : Իսկ հետո , այդ արտադրական միությունների միջոցով կանցնեն մարդկանց մեջ գոյություն ունեցող աշխատանքի բաժանման վաղհայցմանը , կսկսեն դաստիարակել , սովորեցնել ու պատրաստել բազմակողմանի

դարդացման ու պատրաստութեան տեր մարդիկ, վորանք ընդունակ կը լինեն ամեն ինչ անելու: Դեպի այդ և գնում կոմունիզմը, պետք է գնա ու կհասնի, բայց միայն յերկար տարիներից հետո: Փորձել այսոր դործնականում նախապես պատկերացնել լիովին զարգացած, լիովին ամրապնդված ու ձևակերպված, կատարելապես հասունացած ու ծաղկված կոմունիզմի այդ գալիք արդյունքը— դա միևնույն է, թե չորս տարեկան յերեսային բարձրագույն մատեմատիկա սովորեցնել^{*)}:

Յերբ Արեւմուտքում հեղափոխական կոմունիստները պայքար սկսեցին արհմիություններին իրենց կողմը քաշելու համար (անգլիական, ֆրանսիական, գերմանական և այլն), այդ պայքարն ընթանում էր չափազանց ծանր պայմաններում: Արհաբաժման դեղին առաջնորդները յեռանդուն կերպով դիմագրում էին և կոմունիստներին մասսայորեն հեռացնում արհմիությունից. միութենական լայն մասսան դեռևս գտնվում էր մենչևիկյան առաջնորդների ուժեղ ազդեցութեան տակ և հեշտութեամբ չէր յենթարկվում կոմունիստական պրոպագանդային: Հետևանքն այն յեղալ, վսր դեղին միությունները դրափելու գործով զբաղված մի քանի ընկերներ հիասթափվեցին ու յեկան հետեյալ յեղրակացութեան:

— Դեղին միությունները անպետք են: Մեր ամբողջ աշխատանքը դուր է: Յեկեք ջոկեք հեղափոխական բանվորներին և նրանց հետ կազմակերպենք նոր, հեղափոխական միություններ:

Լենինն անխնա հեղնում էր այդպիսի մտադրությունները, այսպես կոչված՝ «ձախ կոմունիզմը»: «Անգլիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում միլիոնավոր բանվորներ առաջին անգամ լիակատար անկազմակերպությունից անցնում են տարրական, սկզբնական, հասարակ, անհամեմատ մատչելի (նրանց համար, ովքեր դեռ սնված են բուրժուական—դեմոկրատական նախադաշարմունքներով) կազմակերպչական ձևերի, այսինքն—արհմիություններին: Իսկ հեղափոխական, բայց «ձախ» կոմունիստները մի կողմն են կանգնել, գոռում են «մասսա», «մասսա» և հրաժարվում են արհմիությունների մեջ աշխատել, հրաժարվում են, պատճառաբանելով, թե այդ միությունները ուսուցիչ են մտա-

^{*)} Լենին—«Ձախութեան մանկական հիմնականութեանը կոմունիզմի մեջ», 1920 թ.

ծում են ստեղծել նոր, անաղարտ, մաքուր, առանց բուրժուա-դե-մոկրատական նախապաշարումների, համքարային և նեղ պրոֆեսիոնալ հանցանքներ չունեցող «բանվորական միություն»։ Այդ «միությունը» իբր թե լինելու չե (լինելու չե!)՝ լայն միություն, վորի մեջ մտնելու համար պահանջվելու չե միայն (միայն!) «ճանաչել խորհրդային կարգը և դիկտատուրան»։ «Ձի կարելի չե-րեակայել ավելի մեծ անմտություն, ավելի մեծ վնաս հեղափոխությանը, քան այն, վոր հասցրին «ձախ» հեղափոխականները։ Նույնիսկ, յեթե այսոր Ռուսաստանի ու Անտանտայի բուրժուազիային յերկուս ու կես տարում չտեսնված ձեռով հաղթելուց հետո, նույնիսկ Ռուսաստանում պայման դրվեր արհմիության մեջ մտնելու համար «ընդունել դիկտատուրան», մեր արածը հիմարություն կլիներ։ Դրանով փչացրած կը լինեյինք մեր ազդեցությունը մասսաների վրա և ողնած կլինեյինք մենչեիկներին։ Վորովհետեւ կոմունիստների ամբողջ խնդիրն այն է, վոր—կարողանան համոզել հետամնացներին, կարողանան աշխատել նրանց մեջ, և վոչ թե շրջափակել իրենց մտացածին «ձախ» յերեխայական լողունդներով^{*)}։

Ի հարկե, սա հեշտ բան չի, բայց և այնպես—սովորեցնում ե րնկ։ Լենինը—«մենք կարող ենք (և պետք է) սկսել սոցիալիզմի կառուցումը վոչ թե յերեակայական և վոչ էլ մեր ձեռքով ստեղծված մարդկային նյութերով, այլ նրանով, ինչ վոր մեզ ժառանգություն է թողել կապիտալիզմը։ Դա չատ «դժվար է», խոսք չկա, բայց վորեւե այլ մոտեցում խնդրին այնքան անմիտ կլիներ, վոր դրա մասին նույնիսկ խոսել չարժե»։ Ուրեմն, վորպեսզի կարելի լինի ողնել մասսային և զբաղվել նրա համակրանքն ու ոգնությունը, հարկավոր է չվախենալ դժվարություններից, չվախենալ բժախնդրությունից ու վտանգություններից, վիրավորանքներից ու հետապընդումներից, առաջնորդների դժգոհություններից (վորոնք լինելով սպորտյունիստ և սոցիալ չովինիստ, մեծ մասամբ ուղղակի կամ անուղղակի կապված են բուրժուազիայի ու վոստիկանության հետ), այլ անպատճառ աշխատել այնտեղ, ուր կա մասսա։ Պետք է կարողանալ ամեն տեսակ դժգոհության միջոցով հեռացնել ամենամեծ խոչնդոտները, համբերությամբ պրոպագանդա ու ագիտացիա

^{*)} Լենինը—«Ձախության մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ», 1920 թ.

մղել բոլոր այն թեկուզ ամենատեսիլուն հիմնարկություններում, միություններում, վորտեղ պրոլետարական կամ կիսապրոլետարական մասսա կա:

Իսկ արհմիությունները և բանվորական կոոպերատիվները (մերջիններս յերբեմն, ծայրահեղ դեպքում) այնպիսի կազմակերպություններ են, վորոնց մեջ մասսաներ կան:

Այն մոմենտին, յերբ արհմիությունները կողքին յերեսաց պրոլետարիատի հեղափոխական քաղաքական կուսակցությունը, վորը միացնում է պրոլետարիատի ամելի գիտակից շերտերը,—ասում է ընկ. Լենինը.—«արհմիություններն անխուսափելի կերպով սկսեցին յերևան հանել վորոշ ունակելուն զծեր, վորոշ համաքային նեղություն, թեքում դեպի ապոլիտիզմը և այլն: Բայց աշխարհիս յերեսին և վոչ մի տեղ պրոլետարիատի զարգացումն ստալ չի գնացել և չի կարող դնալ ստանց արհմիությունների, ստանց բանվոր դասակարգի կուսակցության փոխադրեցության նրա վրա»: Յեւ նույնը—ասում է ընկ. Լենինը.—մենք տեսնում ենք Ռուսաստանում, հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Պրոլետարիատի գլխատառուրայի ժամանակ անխուսափելի յի արհմիությունների «վորոշ չափի հետադիմական լինելը», նեղ իմաստով: Այս բանը չհասկանալ, նշանակում է բոլորովին չհասկանալ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու հիմնական պայմանները: Վախենալ այդ հետադիմականությունից, վործել անցնել ստանց նրան, ցատկել նրա վրայով—մեծ հիմարություն է, վորովհետեւ դա նըշանակում է վախենալ պրոլետարիատի ամանդարդի այն դերից, վորով նրա պարտականությունն է դառնում՝ սովորեցնել, շուսափորել, դաստիարակել, նոր կյանքի մեջ քաշել բանվորության ու գյուղացիության ամելի հետամնաց շերտերին ու մասսաներին»:

Ուստի Ա կուսակցությունը պետք է անընդհատ ուշադրություն դարձնի արհմիության վրա, չարունակ պիտի հիշել, հետևյալ հանգամանքը՝ «թվապես համեատ կոմկուսակցությունը, վորը վորպես բանվոր դասակարգի ամանդարդ, դեկամարում է հսկայական յերկիրը (դեռես ստանց ամելի առաջավոր յերկրների բացարձակ ոգնության), վորը անցումն է կատարում դեպի սոցիալիզմ, ահա այդ կուսակցության համար ամենախոշոր և ահեղ վտանգն այն է. վոր նա, այդ ամանդարդը, կարող է չափից գուրս առալ անցնել, «չափադարեցնել ճակատը», ամուր կռող չարահիշ աշխատանքի ամբողջ բանակի հետ, այսինքն բանվորական և գյուղացիական մասսաներին»:

սաների խոչորագույն մեծամասնության հետ : Ինչպես վր սո-
մենալավ գործարանը, հրաշալի շարժիչներով և մեքենաներով ան-
պետք կհամարվի, յեթե փչացած և շարժիչից մեքենային հազար-
գույ մեքենամասը, ճիշտ ալդպես եւ անխուսափելի կլինի մեր սո-
ցիալիստական շինարարության խորտակումը, յեթե ճիշտ չլինի
կառուցված, կամ սխալ աշխատի կուսակցությունից մասսաներին
հաղորդող մեքենան—արեւմտությունը : Այս ճշմարտությունը բա-
վական չէ հաստատել, այլ պետք է կազմակերպչորեն ամրապնդվի
արհմիությունների ամբողջ կառուցվածքի ու նրանց ամենուրյա
աշխատանքների մեջ^{*)} :

Այսպիսով, արհմիությունների համախմբած մասսաների մեջ
դուրս չու շնորհալի աշխատանք տանելով, Ռուսաստանի կոմկուսը
(ե կամաց-կամաց ուրիշ յերկրների կուսակցությունները) այդ
արհմիությունները դարձնում է կոմունիզմի դպրոցներ, մասսայա-
կան հեղափոխական գործունեության դպրոցներ, հաղորդիչ ապա-
րատը և պրոլետարական միլիոնավոր մասսայի հետ սերտ կապ պա-
հելու հզորագույն միջոցը :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵԶՐԱ-

ԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետեւապես, արհմիությունը վարձու
աշխատանք կատարող բանվորների այն
մասսայական կազմակերպությունն է, վո-
րը կարողացել է համախմբել նրանց շահերը պաշտպանելու հոդի
վրա, սկզբում բոտ արհեստի, իսկ հետո ըստ արտագործյան :
Միաժամանակ արհմիությունն ամենալավ միջոցն է մասսաներին
ընդհանուր պրոլետարական դասակարգային պայքարի մեջ քաշելու,
ներշնչելով մասսային այն գիտակցությունը, վոր իրեն շահերն
անհաշտ են կապիտալիստական դասակարգի շահերի հետ . արհմի-
ությունը մասսաներին աստիճանաբար նախապատրաստում է տա-
պալելու բուրժուազիային և ստեղծելու պրոլետարիատի գիկտա-
տուրա, վորպես կամուրջ չեպի կոմունիզմը :

Այսպիսով, արհեստակցական շարժումը ամբողջ բանվորական
շարժման անբաժան մասն է և վորպես ալդպիսին նա յերկնքից պատ-
րաստ դրությամբ չի ընկնում : Արհշարժումն աստիճանաբար դուր-
գանում է հասունանում է, համաձայն ամեն մի յերկրի ժողովչ. դու-
կան տնտեսության դրության, համաձայն ալդ յերկրի բանվոր

^{*)} Ռ . Կ . Կ . Կենտկոմի բանաձևը արհեստակցական նոր խըն-
դերների մասին (1921 թ.) :

դասակարգի պայքարի քաղաքական պայմանների և բռնաժողովրդական ամբողջ շարժման ընթացքի: Վորոջ յերկրներում և իր զարգացման վորոջ աստիճանի վրա արհաւիրումը մեծ մասամբ դեռ չի կարողանում բանվորների տնտեսական շահերի պաշտպանութունը յենթարկել պրոլետարիատի ընդհանուր դասակարգային խնդիրներին: Դեռ կան զեզլին արհմիություններ, վորոնք զեկավարվում են սոցիալ-դավաճանների միջոցով, վորոնք բուրժուազիայի պոչերն են: Սակայն, պատմության յերկաթե որենքի, տնտեսական ճգնաժամի, իմպերիալիստական կոիփների և հեղափոխական շարժումների բովում սկսվում և համաշխարհային կապիտալիզմի անկումը և նոր սոցիալիստական կարգի ծնունդը: Յեւ պահմիությունները, հավատարիմ հեղափոխական դիալեկտիկայի ճանապարհին, ամբողջ աշխարհում իրոք վոր ավելի ու ավելի հեղափոխական են դառնում ու պայքարում են պրոլետարիատի դիկտատուրայի համար, և իրենց աշխատանքները յենթարկում են պրոլետարիատի ընդհանուր դասակարգային շահերին:

Կապիտալիզմի առաջացման հենց սկզբնական շրջանից, պրոլետարիատը իր դասակարգային պայքարի լայն ասպարիզում ընթանում և բազմամարդ, բաժան-բաժան ջոկատներով, վորոնք կազմակերպված էին զանազան ձևերով և ունեյին տարբեր ուժեր ու գիտակցություն: Դրանցից ամենատաաջավոր ու գիտակից ջոկատը կազմում է բանվոր դասակարգի փաղափակաւ կուսակցութունը:

Կուսակցությունը միայն աշխատավորության փոքրաթիւ պանդարդն է, բայց դրա հետ միասին և պրոլետարիատի ուղեղն է, վոր հանճարեղ պարզությամբ դժոււ է ամենավստահելի ուղիներն ու կապիտալիզմ պայքարելու ամենավճռական մոմենտները: Նա այն շտաբն է, վոր սերտորեն միացնում և բոլոր աշխատավոր մասաները, միասնական հեղափոխական հրամանատարության տակ: Առանձին բանվորները, ցրված անհատները կապիտալիզմի արշալուսին աշխատում են համախմբվել մատույանական արհմիությունական ջոկատների մեջ, վորովհետեւ նրանք կապիտալիզմին են վաճառում իրենց բանվորական ուժը և ցանկանում են միասնական ուժերով ավելի հաջողությամբ դիմադրել նրան: Նման սկզբնական միավորումներն արդեն մի հսկայական առաջադիմական քայլ են: Բայց դեռ այդ քիչ է: Բանվորների տնտեսական պայքարը չի կարելի բաժանել բանվոր դասակարգի փաղափակաւ պայքարից, վորով-

հետև աշխատավարձային իսկական ազատագրումը հնարավոր է միմիայն կապիտալիզմի վոչնչացումով: Ուստի և արհմիություններին բանակը պիտի շարունակ պայքարի պրոլետարիատի հեղափոխական, քաղաքական կուսակցության հետ սերտ կապված ու նրա ղեկավարությամբ, մոբովհետև նա միայն կարող է պաշտպանել ամբողջ բանվոր դասակարգի շահերը և միայն նա կարող է ցույց տալ պրոլետարիատին հաղթանակի ճիշտ ճանապարհը: Արհմիությունների ամեն մի հակադրությունը հեղափոխական կուսակցության, միությունների ամեն մի «չեզոքություն» և «անկախություն» նշանակում է նրանց չնչին, աննշան ու անարժեք պայքարը աննշան նպատակի համար, նշանակում է դավաճանել պրոլետարիատի ընդհանուր դասակարգային շահերին, նշանակում է գերի դառնալ բուրժուազիայի նախկերում, նշանակում է վաչ քե խորտակել, այլ ամբապնդել բուրժուական կարգերը: Հեղափոխական կուսակցությունն էլ իր հերթին չի կարող հաղթել առանց հզոր բանակի, առանց տիրապետելու և իր ազդեցության տակ առնելու բանվոր դասակարգի ամբողջ ստորին մասսան, և ամենից առաջ արհմիությունները:

Զի կարելի այս տիրապետությանը հասնել, խստորեն պահանջելով, մոր արհմիության ամեն մի անդամ կուսակցական լինի և վերապահի արհմիությունները ձևականորեն կուսակցական դառնան: Այս բանը կկտրոնեցնի մասսային, մորն արդեն նոր է սկսել ղեկավարության դալ, նոր է կատարյալ ցրվածությունից անցնում միասնական դասակարգային պայքարին—կապիտալի դեմ: Կոմունիստները իրենց ազդեցությունը միություններում տարածում են հպմառ աշխատանքով, տեական հեղափոխական կոմունիստական դաստիարակություն տալով նույնիսկ ամենաեետամնաց խավերին, իրենց առորյա պայքարի միջոցով կապիտալի դեմ և վերջապես ամենադիտակից ու իր դասակարգային շահերն ըմբռնող բանվորներին կուսակցության շարքերն ընդունելով: Վորքան անխնայ մրճոական ու դաժան կերպով հեղափոխական կուսակցությունը մերկացնի բեֆորմիստական գեղին առաջնորդներին—բուրժուազիայի հաժատարիմ չներին, այդ նոր Զուրատովներին*), այնքան

*) «Զախության յերեսայական հիվանդությունը կոմունիզմի մեջ» 1920 թ.) ընկ. Լենինը գրում է—«Գոմպերսները, Գենդերսոն-

ել ոււշագիւր, մտածված ձեռով և համբերութեամբ արհմիութեանը պիտի աշխատանք տանի կիսապրոլետարական և պրոլետարական մասսաների մեջ, նրանց դաստիարակելու նպատակով. դաստիարակչական աշխատանքը պիտի տարվի նույնիսկ ամենափոքր մնաց, ամենապէշի ու «ամենափոքրիկ» մասսաների մէջ :

Արհեստակցական միութեանները իսկական մասսայական կազմակերպութեաններ են և վոչ մի դժվարութեան ու հալածանք չպիտի սարսափեցնի կոմունիստին նույնիսկ ամենադեղին միութեան մեջ աշխատանքներ տանելու, վոչ մի «յերեխայական ձախութեան», ինչպէս՝ հեղափոխականների դուրս դալը համաձայնողական արհմիութեաններէից, նոր «մարտը» կազմակերպութեաններ ստեղծելը և ալըպիսով մասսաներից կտրվելը—այս բոլորն անթույլատրելի չեն : Միայն լայն մասսայական աշխատանքների շնորհիվ և, վոր արհմիութեանները աստիճանաբար հնարավորութեան կան և ուրիշ յերկրներ կոմունիստական կուսակցութեաններին, վորպէսզի նրանք արհմիութեանների միջոցով ամուր կերպով կապվեն պրոլետարիատի միլիոնավոր մասսաների հետ, վստքի հանեն ապստամբող բանակներ ընդդէմ կապիտալի :

Պրոլետարիատի ավանգարդի, բանվոր դասակարգի հեղափոխական քաղաքական կուսկցութեան ղեկավարութեամբ, լենինիզմի դրոշի տակ արիմիտքայունը հանդիսանում է իսկական մասսայական հեղափոխական գործի դպրոց—կոմունիզմի դպրոց :

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ և արհեստակցական միութեաններ :

2. Ի՞նչից և կախված այն հանդամանքը, վոր արհմիութեաններն այս կամ այն չափով իրենց խնդիրները յենթարկում են պրոլետարիատի ընդհանուր դասակարգային խնդիրներին :

4. Ի՞նչ տարբերութեան կա արհմիութեան ու կուսակցութեան միջև :

ները, ժողովները, Լեզիները վոչ այլ ինչ են, յետև վոչ Զուրատովներ, վոր տարբերվում են մեր Զուրատովից միայն նրանով, վոր ունեն յեվրոպական կաստյում, քաղաքակրթված են, չափած ձեռք ու ճշտած դիմակրատական քսու միջոցներով են աշխատում առաջ տանել իրենց քաղաքականութեանը :

4. Արդյո՞ք միությունները պիտի զրազվեն միմիայն տնտեսական պայքարով:

5. Ինչո՞ւ անհրաժեշտ է, վեր հեղափոխական-քաղաքական կուսակցությունը ղեկավարի արհմիությունները:

6. Ի՞նչ է «անկախությունը» և ինչո՞ւմ է նրա հակահեղափոխական ելությունը:

7. Ի՞նչ նշանակություն ունեն արհմիությունները կուսակցության համար:

8. Ի՞նչ է «ձախույթյան յերկխոսյական հիմնգությունը» կոմունիզմի մեջ և ինչպես էր պայքարել նրա դեմ ընկ. Լենինը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. ԴՈՒՐԵՎԻՉ—«Լենինը և արհմիությունները»—հրատարակություն (հայերեն թարգմ.) ՀԱՄԽ-ի:

С. ГИРИНС—„Ленин и профдвижение“. Издание МГОСПС.

Ա. ՉԵԿՆ—«Ի՞նչ է արհեստակցական արտադրական միությունը»—հրատ. (հայերեն թարգմ.) ՀԱՄԽ-ի:

ЛЕНИН—„Статьи и речи“ (по профдвижению). Изд. ВЦСПС.

Г. ЗИНОВЬЕВ—Партия и профсоюзы в Советской России—ГИЗ. „Тактика большевизма в профдвижении“ Изд. Укрбюро ВЦСПС.

Н. АУЭРБАХ—„Карл Маркс и профсоюзы“ Изд. ВЦСПС.

А. БЕБЕЛЬ—„Профсоюзы и политическая партия“ Изд. ВЦСПС.



Յերեսն հոգ

հաված է

պիտի լինի

4—3 վերից . . .	բանվորական ուրը . . .	բանվորական ուրը
5—20 » . . .	դաստիարակում . . .	դաստիարակում
6—15-16 վերից	բո-բուրովին . . .	բուրովին
	կուսակցության հա-	կուսակցության հաս-
9—14 ցածից . . .	կասությանը . . .	կացողությանը
10—18 վերից . . .	տոկունություն ու . . .	տոկունությունն ու...
10—22 » . . .	կուլակներին . . .	կազակներին
10—22-23 վերից	բանդերին . . .	բանտերին
11—9 վերից . . .	մտրակով . . .	մտրակներով
12—18 ցածից . . .	աստծուն . . .	աստծուն
15—18 վերից . . .	Սոցիալիստական հե-	Յեվ այդ սոցիալիս-
	դափոխության ամե-	տական հեղափոխու-
	նայեռուն . . .	թյան ամենայեռուն
15—13 ցածից . . .	պարան գործել և վի-	պարան գործել իր
	զը կախաղանի ողակի	համար և վիզը կա-
		խաղանի ողակի
24—10 վերից . . .	Պոլեսարիտաի ա-	Պոլյատեի ավան-
	վանգարդի . . .	գարդի
25—8 ցածից . . .	С. Гирине . . .	С. Гирине



20.	Վիշնևվեցկի .—	«Աշխատանքի հաշմանդամների ապահովագրումը»	20
21.	«Կանոնադրության դործարկումներին և տեղկումներին կից կուլտ—հանձնաժողովների» . . .		5
22.	«Ուրինակելի կանոնադրություն բանակումը, կարմիր անկյան և ֆիդ—կուլտի խմբակի» . .		25
23.	Սեմյուշկին .—	«Ակումբային աշխատանքի խնդիրները»	30
24.	Լ յ ա շ կ ու .—	«Գողերը»	5
25.	»	«Առաջին կարմիր դրոշը»	10
26.	Սպերանսկի .—	«Տուրքերկուլյոզը»	10
27.	«Յեկիբ պալքարի, ստրուկ գաղութի», (Խնայենիբ.) . .		10
28.	«Փոխադնության զանազարկչների կազմակերպման կարգը»		10
29.	Յ ա . Ֆ ի ն .—	«Ռուսաստանի արհշարժման 20 տարին»	50
30.	«Պրոֆմիությունը և նրա անդամները», (տպագրվում է)		
31.	Ռոզենֆելդ .—	«Ինչպե՛ս և ինչպե՛ս պետք է ուսումնասիրել արհշարժումը»	20
32.	»	«Բանվորական առաջին միավորումները կապիտալիզմի արշալույսին» . . .	20
33.	»	«Ինչպե՛ս առաջացան և ինչպե՛ս ելին աշխատում առաջին արհմիությունները»	70
34.	»	«Արհեստակց. շարժումը մինչև 1914 թ.»	30
35.	»	«Արհեստաիցական շարժումը համաշխարհային պատերազմից հետո».	30
36.	»	«Արհեստակցական շարժումն Ռուսաստանում (1905—25 թ.)».	80
37.	»	«Ինչ է արհեստակցական արտադրական միությունը: Արհմիությունը և կուսակցությունը»	
38.	»	«Ամատերգամ և Մոսկվա».	
39.	»	«Ինչ է պրոֆմիության կանոնադրությունը»	
40.	»	«Ինչ է հավաքական պայմանագիրը».	
41.	»	«Ինչ է տալիս բանվ. աշխատանքի որևնադիրքը»	
42.	»	«Ինչ է սոցիալական տպահովագրությունը».	
43.	»	«Աշխատանքները բանակումում».	
44.	»	Պրոֆաշխատանքը գյուղում:	

ՄԵՆԱՔԱՆԱԿ ԳԵՌՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ԶԵՂՁ



NL0945040

96

-50-

1926p.

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.

1192

881